ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1
N ՄԱԾՁԲ-9-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **14 .09.2017թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Պատվիրատու», մի կողմից «Քայլ Մեդ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Դ. Արսենյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող» մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 15.07.2017թ. կնքված N ՄԱԾՁԲ-9-2 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Հիմք ընդունելով Կատարողի գրավոր դիմումը և Պատվիրատուի համաձայնությունը՝ կողմերը որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն և նվազեցնել սահմանված ծառայությունների միավորների գները՝ ըստ փոփոխությանը կից Հավելված N 1-ի՝ Վճարման ժամանակացույցը թողնելով առանց փոփոխության:

1.2 Կողմերը որոշեցին փոփոխել նաև Պայմանագրի 4.1 կետը՝ այն սահմանելով հետևյալ բովանդակությամբ. *«Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 8,500,000 (ութ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը»:*

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Քայլ Մեդ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Արշակունյաց 30, բն. 110
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ»
Հ/Հ 9000011006468	Հ/Հ 1570025488300100
ՀՎՀՀ 00804008	ՀՎՀՀ 00134811
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	Տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Դ. ԱՐՍԵՆՅԱՆ

Հավելված N 1
N ՄԱԾՁԲ-9-2 պայմանագրի
N 1 փոփոխության

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ ԸՍՏ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Հ/հ	Ծառայության անվանում	Չ/մ	Քանակ	Միավորի գին (դրամ)	Գնման ժամանակացույց
1	Արտագնա պայմաններում, անհրաժեշտ վերականգնողական բուժման ծառայությունների համալիր (մի քանի ծառայությունների համատեղում) կամ առանձին մատուցում՝ մեկ օրվա ընթացքում	հատ	Ըստ դիմելիության	9,500	Գնումը կկատարվի ՀՀ ՋՈՒ ռազմաբժշկական վարչության կողմից տրված հայտերի (ուղեգրերի) հիման վրա 2017թ. ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ.՝ սույն պայմանագրով նախատեսված առավելագույն գնի սահմաններում
2	Ստացիոնար վերականգնողական բուժում՝ մեկ օր	հատ		11,475.4	

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ ՍՈՒՅՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

Հ/հ	Ծառայության անվանում	Չ/մ	Քանակ	Միավորի գին (դրամ)	Գնման ժամանակացույց
1	Արտագնա պայմաններում, անհրաժեշտ վերականգնողական բուժման ծառայությունների համալիր (մի քանի ծառայությունների համատեղում) կամ առանձին մատուցում՝ մեկ օրվա ընթացքում	հատ	Ըստ դիմելիության	7,916.7	Գնումը կկատարվի ՀՀ ՋՈՒ ռազմաբժշկական վարչության կողմից տրված հայտերի (ուղեգրերի) հիման վրա 2017թ. ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ.՝ սույն պայմանագրով նախատեսված առավելագույն գնի սահմաններում
2	Ստացիոնար վերականգնողական բուժում՝ մեկ օր	հատ		9,562.8	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Քայլ Մեդ» ՍՊԸ
Տնօրեն

Դ. ՄՐՍԵՆՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԿ ԱՆՁԻՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է ՄԱԾՁԲ-9-2 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի արդյունքում 2017թ-ի հուլիսի 15-ին կնքված N ՄԱԾՁԲ-9-2 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2017թ-ի սեպտեմբերի 14-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Հաշվի առնելով «Կատարողի» գրավոր դիմումը և Պատվիրատուի համաձայնությունը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն: Հիմք ընդունելով Կատարողի գրավոր դիմումը և Պատվիրատուի համաձայնությունը՝ կողմերը որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն և նվազեցնել սահմանված ծառայությունների միավորների գները՝ ըստ փոփոխությանը կից Հավելված N 1-ի՝ Վճարման ժամանակացույցը թողնելով առանց փոփոխության: Կողմերը որոշեցին փոփոխել նաև Պայմանագրի 4.1 կետը՝ այն սահմանելով հետևյալ բովանդակությամբ. «Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 8,500,000 (ութ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը»:

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխությունը կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 7.5 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության ԱՇԾ ԳՓՁ բաժնի պետ Ռ. Մարդոյանին:

Հեռախոս՝ 010-66-24-94:

Էլ. փոստ՝ r.mardoyan@mil.am:

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն: